

20,000 զօրականս. բայց ընկերք Սոփրետոյ՝ բաց ՚ի միոյ՝ ամենեւիմբ արդարացուցանէին զԼեւոն, մինչեւ ասել ցնա՝ թէ յայդմ բանի՝ չէ անկ միջամուխ լինել ոչ նուիրակի եւ ոչ իսկ Պապին. ընդ որ զամօթի հարեալ նուիրակին՝ յետս դառնայր տրտմութեամբ՝ ընդ միայնոյ համախոհին ՚ի Մարկադ, եւ հիւանդանայր. բայց եւ խոստովանէր ՚ի թղթին առ Քահանայապետն¹⁴⁶, եթէ արդարացի թուէր ինքեան խնդիր թագաւորին, եւ մեծ շահ օգտի ակն ունելի է քրիստոնէից՝ ՚ի նմանէ:

Տեսեալ Լեւոնի զի ոչ արարաւ դատ՝ որպէս ակն ունէր, եմուտ բռնութեամբ յԱնտիոք (՚ի 11 նոյեմբերի 1203), եւ կարգեաց զԱլիծ՝ իբրեւ պայլ որդւոյ իւրոյ Ռուրիկի Բրնձի. մինչ կոմսն աճապարեաց անկանել ՚ի բերդն, զոր քաջ ամրացուցեալ էին ասպետքն Տաճարականք, կանգնեալ ՚ի նմին զնշան իւրեանց, եւ սկսան մարտնչել ընդ զօրս թագաւորին ՚ի ներքս եւ արտաքոյ քաղաքին, եւ յետ երից աւուրց հալածել եւս ՚ի բաց¹⁴⁷:– Ընդ այս առաւել եւս սրտմտեալ թագաւորին՝ հրաման ետ իւրոցն գրաւել զկալուածս ասպետացն՝ զոր պարգեւեալ էր նոցա, եւ ՚ի բաց վարել զնոսա յերկրէ իշխանութեան իւրոյ: Ի նմին ժամանակի եհաս յԱնտիոք միւս նուիրակն, կարդինալ Պետրոս, եւ ընկալեալ եղեւ պատուով ՚ի Լեւոնէ: Ի ժողով գումարեալ սորա զկաթողիկոսն եւ զեպիսկոպոսունս եւ զպարոնայսն, նախ պահանջեաց վերստին բանիւ եւ գրով՝ հաւանութիւն միաբանութեան ընդ եկեղեցւոյն Հռովմայ. յետ ոչ սակաւ վիճից՝ հաւանեցաւ կաթողիկոսն, որ էր յայնժամ Յովհաննէս Է, նոր յաջորդեալ զԳրիգոր, առաքել նուիրակ ՚ի Հռովմ առ Պապն ըստ հնգամեկի, եւ գտանիլ ՚ի ժողովս նորին անձամբ կամ նուիրակաւ. այլ պահանջեաց եւ ինքն եւ հաւանեցոյց, զի մի՛ եւ յայսկոյս ծովու ժողով լիցի Լատինաց՝ առանց կաթողիկոսի Հայոց կամ նուիրակի նորին: Եւ ՚ի կնքել պայմանացն՝ մատոյց Պետրոս նախ կաթողիկոսին զքահանայապետական պալիումն, եւ ապա չորեքտասան եպիսկոպոսաց՝ միթր եւ գաւազան, առաքեալս ընծայ յԻննովկենտեայ¹⁴⁸: Յետ վճարելոյ զեկեղեցական գործն, ձեռն արկ ՚ի

¹⁴⁶ Videbatur mihi petitio ejusdem Regis justa et admittenda; oblatio quoque utilis multum et fructuosa Christianitati.

¹⁴⁷¹⁴⁷ Տարեգիրք ասէն միայն *կաղեալ* Լեւոնի յԱնտիոք աւուրս երիւ. MCCIII. Entra le Roy Lyvon en Anthioco devers le chastel, le jour S. Martin et prist tant que au temple, et demoura dedens IIIJ jours. – Chroniques des Croisades. չկայ

¹⁴⁸ Պատմէ գայսոսիկ Սիկարտ՝ եպիսկոպոս Կրեմնայ քաղաքի: